


5 A

Հ. ՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
«ԶԱՆՈՒՐ» ԳՐԱԿԱՆ ԸՆԴՈՒՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԹԻՒ 5




ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Բարեհաճ արժանաբանք
ԱՍՆՆ, ԴՈՒՐԵԱՆ, ՊԵՏՐՈՒՄԻ



ՊԵՏՐՈՒԹ 1926
ՏՊՕՐԸՆ «ՀՐԱԶԴԱՆ»

Հ Բ Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն
«ԶԱՀԱԿԻՐ» ԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԹԻԻ 5



891.99

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ


ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ




Բարեհաճ արտոնութեամբ
ԱՄՍՆ. ԳՈՒՐԵԱՆ ՊԵՏՐՈՍԻ

A
II
31567



ՊԵՏՐՈՒԹ 1926

ՏՊԱՐԱՆ «ՀՐԱԶԴԻՄՆ»





Տ Ա Ղ Ք

ԻՂՁ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԲՈՐ՝ ցօղին փաղփուն շիթեր գիշերուան
Խոտի՝ թերթի՝ ծաղկի վրայ կը տեղան
Եւ երբ երկինք աստղեր շողան մթավար,
Ցայտեն արցունք կայծ իմ աչերքս խաւար.
Ինչ, Հայաստան, քեզ մոռնա՛լ...
Երբե՛ք, այլ սեւ նոնի մ'ըլլալ, քեզ շո՛ւք սալ:

Զիս աստղազարդ երկին սփռփել չե՛ կարող,
Մասեաց սարին արժանուայից է նա ֆող,
Չեր յիշատակն ինձի համար հեշտագին՝
Նրման կուսին սիրոյ առջի արցունքին.
Դամբա՛նք, աւե՛րք, ձեզ մոռնա՛լ...

Երբե՛ք, այլ ուղիս մ'արցունք ըլլալ, ձեզ ցօ՛ղ սալ:

Երկա՛թ շղթայ՝ բա՛նդ եւ անդունդք ու վրիեր,
Ամպրոպ ու շանթ, մահուան գանգակ ու ջահեր
Չե, չեն կարող պահ մը ձեր վառ յիշատակ
Ծածկել սեւի՝ ու սոսկումի՛ վեմի՛ սակ.
Ազա՛՛ս օրեր, ձեզ մոռնա՛լ...

Երբե՛ք, այլ հ ուր մ'ըլլալ, եւ ձեզ Հայո՛ւն սալ:

Ջուարթ բնութեան ալն կամարներն ծաղկահիւս .
Բոյր՝ կայծ ու գեղ, նայուածք ժրպիտ սիրուհւոյս,
Ենուտ հովեր՝ արծար ալիք վրտակին
Ձեր հուրն արեւս պահ մը առնել չը կրցիք .

Փառա՛ց օրեր, ձեզ մոռնա՛լ . . .

Երբե՛ք, այլ ձեզ պատրոյց մ՛ըլլալ, ու լո՛յս տալ :
Արեւոյսին տօգոյն աստղեր երբ փայլփլին,
Պողոսր գեղգեղ վարդակարօտ բուլբուլին,
Բնութեան դաւնակի, ո՛հ, չե՛ն կրնար նուագեր
Ձձեզ հառաչք, յոր մարնչեն նոնիներ .

Սե՛ւ սե՛ւ օրեր, ձեզ մոռնա՛լ . . .

Երբե՛ք, արիւն մ՛ըլլալ, եւ ձեզ կարմիր տալ :
Թերեւս ժպտին Հայոց մրթին սարերը,
Կամ շունչ ծխեն Սիպիրիոյ սառերը,
Բայց սեւ հոգիք ու սեւ նանկեր անողոք
Խեղդել կուգան ազատ հոգւոյս իմ բողոք,

Արդարութի՛ւնք քեզ մոռնա՛լ . . .

Երբե՛ք, այլ սուր մ՛ըլլալ, արեւ քեզ մօտ տալ :

Մինչ ց՛ե՞րբ գոչեմ, ձայնըս մեկը, չը լսեր,
Հայն իւր ժանգոտ շղթան երբե՛ք չը սարսեր . . .
Բնաւ ինձ հետ իրաւունք ոչ թոթովեց,
«Հայր չես» ծաղրեց, եւ ձայնը գիս չը թովեց .

Հա՛յ ու շղթայ, ձեզ մոռնա՛լ,

Երբե՛ք, այլ շունչ մ՛ըլլալ, ու ձեզ ոգի տալ :

Հարուստն ու կղեր թէ ազգ գգան եւ վառին,
Թէ «Լոյս եւ Սէր» Հայ արեւուն մեջ թառին,
Թէ Հայութիւն երկնէ «Ազատ գաւակներ»,
Թ՛եղբայրութեան՝ սիրոյ վառին կրտակներ,

Քնա՛րդ իմ, գեղ մոռնա՛լ,

Ո՛չ, յետ շիրմիս քեզ ձայն ըլլալ, ու Հայ լալ :

Ի ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆ. ՀԱՅՐԻԿԻՆ

Այն սրգալի սել սել նոնեաց ետեւեն
Արեալոյսին շող մեզի «Լոյս» կ'աւետեն.
Խուսեց խաւարն, փողփողե լոյս արեւուն
Հայոց կարմիր մարգաց սառուս սարերուն
Փրլասակաց մրթին խորհեն կուգայ ձայն
Հայեր, Հայեր, դեռ Հայասան չե՛ կործան...

Ձայն տուողք չե՛ բսուեր,
Հուր ներենչողք չե՛ն ասդեր,
Եղբայրութեան է հուր ձայն,
Հայր սիրող Հայն է այն:

Նա գիշերուան հետ ազգ խոկաց ու լացաւ,
Եւ արեւուն սրլափաց հետ կրակ դարձաւ,
Հողմոց թելով միտ սրլացաւ հայկարան,
Տիգրիսի հետ թրջեց աւերփ սխրական.
Հայասանի՛ եղբայրութեան սիրահար,
«Հայ» գոչելով շուրթերն եղան դալկահար:

Աւարայրի նա վարդին
Սոխակն եղաւ սրմագին,
«Վարդան» գոչեց նա, անդէն
Վասակն ելաւ դամբանէն:

Նա իրաւո՛ւնք՝ ազատութի՛ւն գոչեց յար,
Փոռոս ու խոնջ ոտերն նետեց, ուր Հայ կար.
Ուր որ Հայ կար, ջերմ համբուրեց նա այն հողն,
Ուր Հայն շնչեց՝ հառաչ եւ հուր դրկեց հոն.
Բոցաթրոխի Հայե առ Հայ նա թրուաւ,
Հարուած՝ ցաւ՝ դաւ սերն խեղդելու շեղանքաւ:

Այս հայկազնը չունէր սուր,
Այլ կուրծն ունէր հայ՝ խաչ՝ հուր.
Կը հագնէր սել ու գրգլեակ,
Նա գուլթ ունէր, ո՛չ ֆրսակ:

Ազա՛ս սիրեց, ազա՛ս գոչեց, չը թովեց,
Հայն գայն ասեց. Հայ մը ձեռքը չը թօթուեց,
Բանս՝ կախադան՝ ափսոս՝ Սիպիր եւ սուսեր
Ձը կրցին ձայնն մարել՝ խեղդել իր յոյսեր.
Միտս «Հա՛յ» կանչեց, քարձն էր գլխուն Մասեաց սար
Նա սիրեն ըրաւ հայրենայու՛ւ գոռ ֆրնար:

Արդ հայրենեաց մեր շնչիկ՝
Հով մը կուգայ անուշիկ՝
Վառ նակասուց այցելու,
Հայուն աչերն սրբելու:

Բա՛ց են թելեր, քա՛ց են սրեր, քա՛ց նակաս,
Եկո՛ւ օգնել սրկար Հայուն ապաքախս,
Հո՛ւր հայրենեաց. եղբայրութեան դու հագա՛գ,
Քրնաւահար Հայու մը իդձ ֆեզ հրեշտակ.
Վես Վոսփորին ալիք ըզֆեզ քարելեն,
Ցուե՛, սել ձեռք, սել ամայ. Հայոց արելեն:

Արսուր ու ֆիրսդ թող փալփլին՝
Ձերթ ասդեր հայ երկնփին,
Եւ սովրեցուր Հայուն դու
Սիրե՛լ, օգնե՛լ իրարու:

Արսասուարթո՛ւ ֆե՛զ կը նային հայ աչեր,
Սել շղթաներ ֆեզ ցոյց կուտան գոռ ֆաջեր,
Մըտոյ կսրինք՝ աղջիկք, ի ֆեզ ապաստան
Հայն ու դամբանն՝ սանարն՝ հիւղակն՝ Հայասան.
Թո՛ղ փլասակաց մոխիրեն յառնեն յիշատակք,
Մուր մե՛նաստանք վերափայլեն նախնի փառք. . .


Լո՛յս, լո՛յս տեղան ամեն տեղ,
Քիտութի՛ւն, լո՛յսն հայ ասդեր,

Լ՛ո՛յս հիւղակին, լ՛ո՛յս վրհին,
Լ՛ո՛յս հայ փառաց շէջ ջահին :

Ահա սրանայ մեզ ապագայ բոցագես,
Մեր հայրենի աւերակաց սայ լոյս վես .
Հարկ չեն մեզի նիգակ եւ սուր ու վառօդ .
Իրաւունքի՛ սիրոյ՛ լուսոյ ենք կարօս .
Եղբայրութեան՝ Հայն կը յենու , ո՛չ թագի,
Բռնէ ձեռքէն որ շունչ առնէ եւ հոգի .

Եւ այ մոռնայ հայկազն հե՛ք
Հին հարուածներն ու խոր վերք .
Եւ սիրսք ի սրոփ որոսան
— Կեանք մ ի՞նչ ՀԱՅՐԻ՛Կ ԽՐԻՄԵԱՆ : »

1869



Ի ԴԻՄԱԻՈՐՈՒԹԵԱՆ

Ա Մ Ե Ն . Հ Ա Յ Ր Ի Ն Ի Ն

Ո՛վ է որ գայ մեզ՝ նեղփած օդն՝ ալին,
Ճակասն գոհարփ՝ աստեղփ կը փայլին .
Թագաւո՛ր մ'է Հայ, որ ցասկեց շիրմեն,—
Ո՛չ, դեմքը վառողփ արցունք ըսպի են .
Նա կ'արհամարհէ ծիրանի՝ փառքեր,
Նա սել է հազեր :

Նա մեր հայ եղբարց արցունքն է փաւեր,
Ցոյց կուսայ մեզի արիւն ու աւեր,
Դիւցա՛զն մ'է, որ դո՛ւրս թրուաւ դամբանէն,
Ո՛չ, թուր չէ՝ ձեռքն՝ այլ խաչ բռներ արդէն,
Չը ցայտեր աչքէն շանթեր, այլ սէ՛ր գո՛ւր .
Դողայ անկէ Քուրդ :

Նա կուգայ հայոց մարգերէն կարմիր,
Ազատեց Քրդէն Հայը վճակիր,
Խաչափայտով մը պանծացաւ յաղթող,
Հնչեցուց ի Հայս ազատութեան փող,
Տեսէ՛ք՝ փուրձ հազեր, կարծես ենք դրակ,
Բայց սիրեն է կրակ :

Գայ Մասեաց սարէն՝ նա ձախն ու աջը
Մովսէսի ֆնարն՝ Ղեւոնդի խաչը,
Ասդի մը նայուածք,
Աղեաց խորերէն կը սիրէ նա Հայն,
Դեռ չը նանչցա՛ք գայն, նակա՛սք վճակո՞՞ծ,
Հրեւեակն է Հայոց :

Ահա կը հնչէ նորա հեւս սրբինգ,
Արձագանգ կուսան Հայոց դաւճք՝ լեռինք,
Նրբանք իր շուրջը, Հայե՛ր արտալած,
Չը խաբեր՝ մասներ նա մեզ օտարաց,
Չը սիրեր ոսկի՝ փառք ու վաս մարդիկ,
Հայուն է Հայրիկ :

Գլխիկը դրամ սրգաւոր սրբեմ,
Զք թափիր նակսէն դեռ ալիք վրսեմ,
Քայց դեմքին վրայ կանուխ են փթթամ
Անցքի ու վեցի խորումներ միտք թաց.
Միակ վարձք մ'ունի՛ այն է կոչել զինք.

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ»:

1869



Ե Ր Պ

ՄԱՐՏԻՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Արի՛ք, որդի՛ք Արարատեան,
Նրանմ հակասք ցայտն թող շանթ,
Դողդոջ ձեռաց մեջ սուր ցոլան,
Արդար վրիժուց ժամն հասաւ արդ,
Փերի՛ Պարսկին անդուլ կացին,
Հայք բաւ լացին.

Մեռնի՛նք Մասեաց շուքերուն՝ սակ,
Յաւերժ կանգնեն յաղթանակ.

Օն, ազա՛նք ըլլանք
Եւ Հայաստան մեր,
Թո՛ղ սան արձագանգ
Մասիք անվեհեր.

Մեռնի՛նք յԱրսազ՝ Տղմուշի մօտ՝
Ռուշի ծագի մեզ առաւօտ.

Մեր սուսերց փայլեն
Սասանին Սասանք,
Մեր ամեն փայլեն
Ծագի յաղթանակ:

1869

ՆՈՐ ՍԵՒ ՕՐԵՐ

Մինչ բնութեան՝ ինկան արեան դարերը,
Աշխարհ մը կայ արցո՛ւնք թափող սարերը,
Արեամբ պղտո՛ր դեռ գետերուն ափունքը,
Չը դադրեցաւ դեռ այս եկրին սել սուգը.

Աւերակոյսն այս ահարկու,
Աշխարհ մոխրոց ու նոներու:

Հայ դիւցազանց՝ որ հոն ինկան ի վաղուց՝
Ոսկերոսիքն՝ արմասներն այն վրրիժուց
Ա՛հ, դեռ բողբոջ մը շարձրկած հո՞ղ դարձան...
Ուրեմն հիմա աղիք չունի Հայասան...

Ա՛յ, դալկահար դու Հայրենիք...
— Եւ դեռ Քրդի՞ն ալ խոնարհիք:

Մառախուղ են հագեր՝ դաշտն ու լերինքը,
Չը գեղգեղեր Հայ հովուհւոյն սրինգը,
Հայուն համար չը փալփլեր աստղիկը,
Արցունքներով թռում եր հոգւոյն ծաղիկը.

Դադրեր անմեղ խինդ՝ թինդ ու պար,
Շողա՛յ ազատ Քրդին տապար:

Դողդոջ մտնէ առագաստը գիրգ հարսը,
Արտասուլաթոր՝ դեմքին ծածկած հոյլ վարսը՝
Որ չըլլայ թէ յանկարծ սիրոյ մրմունջը
Խափանէ վաս Քրդին տոփոտ մրռունջը.

Սերը փեսին արեամբ կարմրի,
Հարսը քրդին կ'երթայ գերի...:

Մի՛տս կը ցանէ Հայն, չը հնձեր... անօթի...
Իր դալկահար դեմքն երկու շիթ կաթի,
Արտուր ու ֆիրտ մ'իանգամայն... ո՛վ Ասուլած.
Նա նաշակէ սրտեմած սրտով ցաւ ու հաց.

Այս տարաբախտ ազգն է Հա՛յը,
Մեր արի՛ւնքը. մեր եղբայրը:

Ա՛հ, ոտնակոխ Հայուն սիրտը եւ տանար
Հրացանն յ'ուս սա կոտ Քրդին անդադար,

Եւ մեր ներսը չեռա՞ր կարմիր մեկ ային
Կամ մեկ փրփուրն հայրենեաց սուրբ կրակին,
Որ սառուցի գերթ որդիներ՝
Մեր աղիքները չենք թօթուեր :

Ի՞նչ սիրս է այս ո՞ր հոս գամեր է կսուլած,
Մինչ չը սիրեր նա հայրենիքը ցաւած . . .
Չունի ներսը Հայն իր նախնեաց սրտփը ,
Լքե՛ր է զինք նակասագրին Սերոբը,
Երես դարձուց Հայն սուսերէն,
«ՍԵԼ» ժառանգեց լոկ պապերէն :

Սառե՛ աչեր՝ քարէ լեզու, ա՞յս մընաց
Քիւր փառքերէն մեր գոռ ու պերն հայրենեաց,
Սեւագլուխ խոււմբ մը ագուա՞ւ մընաց լոկ՝
Կամ խոււմբ մը կոյր խլուրդ՝ ստո՞ւկ փառքի սոսկ
Ա՛հ, այն արծիւ ժողովրդէն՝
Որ հարուածուի արդ կոռս քրդէն :

Ի՞նչ, սեւ ձեռքեր հրապին վրնիս նակասին ,
Հայ կուսիկին նուիրական լաչակի՛ն,
Դրժոխք մը սարփ թօշենն վարդը կուսուրթեան,
Կարծես ծաղիկ կը կոխկոսեն — գայս կը զգան,
Եւ երբոր Հայ մը մորթեն
Կարծես թէ հաւ մը մորթեն :

Է՛հ, մի վախե՛ք ասեղ մ՛անգամ պէտք չէ մեզ ,
Այլ հայրենի սոսկ բզգացում մ՛աղեկե՛զ՝
Փանգոս սուր մը՝ պատճառ զրօ՞ւ մը թէ չունի՛նք ,
Կուրծքերնուս սակ սրտփող սի՞րս մ՛այ չունի՛ք ,
Օ՛ն, ոտքերնիս զարնե՛նք գետին,
Յայտնե՛նք մեր ցաւը ահագին :

Մեր քերց վարդերն եւ արեւներն մեր եղբարց՝
Մեր սանարաց խաչերն՝ պատի՛ւն հայրենեաց,
Մենք պահանջենք բարօրութի՛ւն մեր ազգին .
Չա՛յս պահանջե՛նք՝ զա՛յս Սուլթանէն սրտագին,
Մեր պատիւն ու Քուրդը կ՛ուզե՛նք
Եւ կամ նորա զենքին դեմ զե՛նք :

Ի Ց Ի Ի Թ Է

Ո՛հ, ի՞նչ ես դու, սե՛ր, երկնի հո՛ւր, կամ ժրպի՛ս...
Չունի երկին աչացոյ կայծերն ու կապուս,
Վարդը չունի բու յանջոյ անբիծ՝ յուսափթիթ,
Չունի յուսինն վարդերն շիկնոս այտրուդ :

Գիշերն երկնի կայծից՝ յուսնոյն սիրադեմ,
Ցերեկն այտաց՝ ծաղկանց ժայսիս... մեկն՝ւն գեթ...
Իսկ քեզ համար ես արցունքով կ'աղօթեմ,
Դու չես շնորհեր նայուածք մ'ինձ հուր աչերեդ :

Արդեօք եա՛կ մ'ես՝ թե երկնի գուարթուն,
Կը նախանձին փայլիդ վրայ վարդ՝ յուսնակ.
Չայնիկդ ապշած լրսելով քաղցր ու թրթռուն՝
Նոնիներու մեջ սրգայ լրուիկ յուսինեակ :

Ծնե՛ի իցի՛ւ թ'հեւացոյ հով մ'անուշիկ,
Եւ գգուելով երագք նակսիդ այդ անսուգ՝
Տայի շունչս շուրթերուդ մեջ ես յուշիկ,
Լոկ սրբելով, թե շողար աչքդ արժանուք :

Պարսեզդ իցի՛ւ թե փթթե՛ի վարդ յացոյ,
Եւ երբ գայիր այգուն շաղին ժայտով պերն՝
Գուննոյն ներկել այտերդ՝ թափել գոգդ իմ ցօդ,
Վերջին շնչիկս ի գիրկդ առնե՛ր ել եւ եջ :

Բղխե՛ի ես իցի՛ւ թ'առու մը վրնիս,
Եւ երբ յուշիկ գայիր մօտ իմ եզերքին՝
Ցոլանար իմ հայելւոյն մեջ բու ժրպիս՝
Պղտորելով կապոյս այլիս՝ ցամփե՛ին,

Ա՛հ, իցի՛ւ թե լինե՛ի ես նառագայթ,
Շողոնդայի դեմքիդ վրայ վայրիկ մի,
Խաբե՛ի քեզ թ'ես աւելի գեղազարդ,
Ի՛անուշաբոյր մազերուդ մեջ մարե՛ի :

Ա՛յլ ո՛չ, անգո՛ւթ, եթէ տուի՛ր մեկու՛ն սէր .
 Իցի՛ւ թ՛անոր գերեզմանին Բարձր լինիմ,
 Եւ դու թօժած գաս շնչե՛լ շուրջս . . . արժանուե՛լ . . .
 Քեզ հրպե՛լու համար հարկ լոկ գոյ շիրիմ . . . :

1867

ՄԱՆՈՒԿՆ ԱՌԻԽԱԶ

Ո՛վ խաչափայտ
 Դու Բառաթել՝
 Որոյ նակաս
 Սիրոյ արել՝
 Գամուած Յիսուս՝
 Փրչեց խոնարհ
 Հոգի եւ յոյս
 Սէր ընդ աշխարհ,
 Ընդունե՛ իմ հոգիս, հեզիկ փառանճանանչ,
 Քեւերուդ սակ, եւ սորվեցուր ինձի հաւաս,
 Սէր՝ յոյս, որով միշտ բաբախե՛ իմ փափուկ լանջ,
 Եւ փարատե՛ լուսովդ խաւարն արեւս վրհաս.
 Սորվիմ աղօթ
 Դանճայ ֆեզի՝
 Երբ խուրթից ասի
 Իմ Լանդիպի
 Սեւ Սասանին՝
 Որ նզնի միշտ
 Դիւթել գհոգին
 Ի մուր՝ ի վիշտ:

1871



ՍԻՐԵՑԻ ՔԵԶ

Շաղի, շողի ժամֆ էին,
Վարդից հրդեհ կար յերկինն՝
Փոխան ամպոց հուր հիւսֆի,
Տեղա՛ր մարգրիս եւ ոսկի:

Թաւուսֆի մը խոր ծաղկոս
Ընկողմանած նուաղկոս՝
Կը հեւայիւր դու տօգոյն,
Ամբան սլւզի մը հանգոյն

Աչերդ սիրոյ Ասրուշան . . .
Եւ մասներովդ գերթ շուշան՝
Կը փեժքիւր ծաղիկ մի,
Յառած շողից աչդ երկնի:

Հիանայի թէ ի՛նչպէս
Փեժքիւր թերթեր վարդին վէս՝
Եւ թափթփել ի քո գիրկ
Զօրէին մասունքըդ գիրգ:

Եւ նուաղկոս այդ աչեր
Նշուկին նո՛ր եթեր,
Եթեր մ'աստեղց, ուր փոխան
Հրաշքկ սրլաֆֆ կը շողան:

Ըրիւր աչացդ մէկ կայծին
Եւ մէկ վանկիդ գիւ գերի,
Շղթայեցիւր գիւ, անգո՛ւր,
Նշոյլներովն վեհ հոգւոյդ:

Թո՛ղ սիրսս, ինձմէ գնա հեռի,
Զուգեմ հոգւոյս թագունի
Քեզ՝ որոյ կուրծն վարդի թերթ
Այլ կրանիս սիրսն է գեթ:

Դու որ գիտես լոկ բուրել,
Գիրգ արտնու վերք փորել,
Եւ կը սիրես երբ կարի՛
Քեզ պաշտող սիրտն արիւնի:
Քաւուսֆի մը շուք նրսեմ
Երբոր մենիկ արտասուեմ,
Հոն ես դու, կը գտնես զիս
Տեսելներէն կը խօսիս:

Երբ առուակին մեջ փաղփուկ
Կ'ուզեմ մոռնալ դեմքդ, դուն
Դարձեալ հոն կը գտնես զիս
Ալիներէն կը ժրպսիս:

Երբ կը փախչիմ ժայռ ու սար՝
Զախցախել սիրտս եւ քնար,
Հովին մեջէն միշտ մընջես՝
Թէ բնաւ զիս սիրած չես:

Գրկեմ արտվս արդ ցուրտ հող,
'Ի ալ չը դիպիմ քեզի թող,
Կոյս մ'ե նաեւ գերեզման...
Կա՛յ խորունկ սիրտ մ'անոր նման...

1869



Մ Ա Ն Ի Շ Ա Կ



Ո՛վ մանիւշա՛կ, մանիւշա՛կ,
 Ինչո՞ւ այդպէս գլխիկոր
 Նայիս հողին սրգաւոր . . .
 Ո՛հ ինչի՞ այդ նրեանակ :

Միթէ դու կո՞յս մը սեսար,
 Որուն աչաց քով կապուս՝
 Ըզեզ գրսար այնչափ մութ,
 Որ կը սրգաս սեւահար :

Եթէ դու ալ վարդին պէս
 Ունենայիր դոյզն բոսոր,
 Կը շիկնէիր, ինչպէս որ
 Շիկնեցաւ այն վարդը վէս :

Երբ սեսաւ որ մը ներա
 Վարդերն անբիծ այսերուն,
 Շուեանին պէս դալկուքիւն
 Եթէ ըլլար քու վրայ :

Դժգունէիր որպէս նա,
 Ինչէս որ որ մը Շուեան
 Դժգունեցաւ աննրեան՝
 Տեսաւ ձեռներն երբ ներա :

Եւ դեռ քսե՞մ . . . որ մ'երկին
 Ամպոսեցաւ . . . է՞ր արդեօք . . .
 Երբոր կ'ընէր նէ աղօթ
 Վերն յառած աչքն ու հոգին :

1871

31567



Ի Մ Յ Ա Ի Ը

Սուրբ սենչերով լոկ ծարաւած՝
Յամաք գսնե՛լ աղբերքն յամայր,
Յամբի՛լ ծաղիկ հասակի մեջ,
Ո՛հ, չե՛ այնչափ ցաւ ինձ համար :

Ջերմ համբոյրով մը դեռ չայրած
Սա ցուրտ հակասքս դալկահար՝
Հանգչեցնե՛լ հողէ բարձին,
Ո՛հ, չե՛ այնչափ ցաւ ինձ համար :

Դեռ չը գրկած եակ փուռջ մը
Ժպտե՛ գեղէ՛ հոտէ շաղեալ՝
Գրկե՛լ սա ցուրտ հողակոյսը,
Ո՛հ, չե՛ այնչափ ցաւ ինձ համար :

Քաղցր երազող մ'յրդի մրափ մը
Չ'անդորրած գլուխս մրկահար՝
Ննջել հողէ վերմակին սակ,
Ո՛հ, չե՛ այնչափ ցաւ ինձ համար :

Հագնի՛լ հիւղին մուր—անուր,
Ծրծե՛լ նորա մուր—օդն յար,
Միտս ցաւի՛լը միանգամայն,
Ո՛հ, չե՛ այնչափ ցաւ ինձ համար :

Հեք մարդկութեան մեկ ուսը գօս՝
Հայրենիք մը ունիմ թրտուառ,
Չօգնած անոր՝ մեռնի՛լ աննշան,
Ո՛հ, ա՛յս է սոսկ ցաւ ինձ համար :

1871



ՀԱՅՐԻԿՆ ՀԱՅՈՑ

Փուրա՛, հովուապե՛ս սիրող յար ազաս՝
Հարազաս,
Փարաշի՛ սել ամպ, փայլի՛ արդ արել
Արդարել
Փողփողի՛ն դաշտե, ազաս առնենք քայլ
Առ նենգ գայլ,
Յրցո՛ւր ցուպրդ, Հայերն կանչե՛ յ'արօս մի՛
Յար հոս մի՛:
Հանկեր արիւնոս կուրծ մեր թափ առիճք,
Թափառիճք,
Եկո՛, հովուե՛ մեզ, սիրածդ ազգասե՛ր,
Ազգ ա՛ս եր:
Դու գրթոս նրման երկնի հայրիկին՝
Յ'այր՝ ի կին՝
Յ'որոց ել յ'այիս սփռե՛ յոյս ել սեր,
Լո՛յս ել, ե՛ր
Ցաւի՞ չը զարթնու հրեռած յ'այգուն յ'այն
Յա՛յ, հուն հայն:
Սոխակ մ'եիր մերթ ի նոնս, լ'երգերդ՝
Վերգերդ
Առած բիւրաւոր՝ դեռ դու կանչեցիր,
Կա՞ն. չե՛ ցիր
Երգերդ միշտ մեր սիրս, սիրոյ հոգւոյ ձա՛յն,
Յ'ոգւոց հա՛յն
Հանեց՝ վառեցաւ ձայնեդ՝ իմացաւ
Հիմա ցաւ.
Քե՛զ խնդրե՛ Հայն արդ, ամբոխ ամբոխ չ'ե՛
Աղբոզ ե.
Արդ ըսե՛ Հայուն, րե՛ ազդ անոր
Աւսանօր.
Ես կարօս եմ վառ սրտից՝ ձեռքերի,
Ձեր գերի,

Եղբայրքն ազատե՛լ, լո՛յս տալ ի Մասիս .

Ի մաս յ՛իս

Առնել իմ նախնեաց արիւն արսուլեան ,

Արդ սուգեան

Ելնեն Հայք՝ օրհնեն սիրով յաւեանս իս

Յ՛աւեաիս .


Ցանկամ, որ Հայք ինձ ըսեն ա՛հ , յամայր

«Ահա՛ մայր» .

Այս իմ վերջին տենչ , միտ նե՛ս Հայկայ կան

Հայկական :

1869



Թ Ր Ք Ո Ւ Հ Ի Ն

Նրեկոյ է . բոցավառ է հորիզոն ,
Կառք մը կ'անցնի դագաղի պէս յամբարնաք ,
Գեղուհի մը ընկողմանած սրուքէ հոն ,
Վերջալոյսի աղջիկ մ'է սա , ո՛վ Ասուած .

Եթէ նայի ,

Կ'ըսես—Հի՛մա կը մարի :»

Մեղրամոմէ անդրիանդի մ'է հանգոյն ,
Ի՛նչ դայկահար . . . կարծես հաջադը վառէ
Պատան մ'է նուրբ ներա վարդիկը դժգոյն .
Ասուած զնէ զոյգ մ'աչերովն կը վառէ .

Եթէ ժրպտի ,

Կ'ըսես—ո՛հ , հի՛մա կ'անցնի :

Նայիլ կ'ուզէ , բայց աւելի կ'նուաղի ,
Սիրք խուճկի պէս կը մխա՛յ սիրավառ ,
Նէ շողերու՝ բոյրերու է թագուհի ,
Խոնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրէ ծաղկէ թառ .

Եթէ շարժի ,

Կ'ըսես—հի՛մա կը թռչի :»

Հանջն է յուզեալ Ովկէանի մը նման .
Կ'ուզէ սիրել . . . համբոյրի մ'հետ նուաղիլ ,
Մաշիլ , խամբիլ , խոնջած ընկնիլ գերեզման ,
Քամել սիրոյ կրակէ բաժկին հուսկ կաթիլ .

Եթէ շիկնի ,

Կ'ըսես—հի՛մա կը բռնկի :»

Սրտի մեղո՛ւ , ինչպէս կոչեց Համարթին՝
Որուն ծրծած ծաղիկը՝ սիրտ , մեղրն է սէր .
Ես կոչեմ զնէ կո՛յս՝ որուն սիրտն է երկին
Անհուն սիրոյ որ հորիզոն չունի դեռ .

Եթէ խօսի ,

Կ'ըսես—հի՛մա կը հասնի :»

Նէ կը վառի, մի՛՛ս կը վառի, չը հասնիր
 Տընանկ կրնոջ սանարն վառած նրագին պէս,
 Աստուծոյ նման գիշեր սիրէ՛ փողփողիլ,
 Կրակ մ'է՛ փրթած կողէն սիրոյ բոցագէս . . .

• Թէ իսկ մեռնի,

Կ'ըսես — հի՛մա կը ծնի :»

1871

Ս Ի Ր Ե Լ

Բոյլ մը նայուածք՝ փունջ մը ժրպիտ՝
 Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ :

Ես ուզեցի լուռ մենանայ
 Սիրել փրթիթք՝ խորշեր թաւուս,
 Սիրել կայծերն երկնի կապուս՝
 Եւսրուան շաղն՝ իրիկուան բայ՝
 Ճակասագրիս սել գիծ կարդայ՝
 Խոկայ՝ սուգիլ՝ զմայլիլ սուս :

Ո՛հ, խուրձ մը վարս՝ եղեմ մը շունջ՝
 Շրջագգետս մը օրջեց իմ օտւրջ :

Ես ուզեցի լոկ ու մի՛նակ
 Սրսակցիլ ջինջ վրսակին հետ,
 Յիշատակի շունի նա հետ,
 Սի՛րտ մ'որոյ մի՛նչ սուգիմ յասակ
 Պսնեմ գիս կոն դժգոյն յսակ,
 Պաղտնի՛ք մ'ունի — այն՝ անթիւ վե՛տ :

Երբեք մը սրոփ արտի լսեցի,
 Հծծեց — «Կ'ուզե՞ս սիրտ, ե՛կ ինձի :»

Ես ուզեցի սիրել զեփիւռ
 Որ երկնիէն թռչի բեկբեկ,
 Նա չը սիրեր խոցել երբե՛ք,

Հոգի՛ մ'որոյ գաղտնիքն բոյր,
Քիտէ շոյել երազներ բիւր,
Երկնի բոյրն յուր կ'ածէ առ հեք:

Ո՛հ, փուրջ մը բոց փրսփրսաց ինձ.
— «Կ'ուզե՞ս պատշել հոգի մ'անբիծ:»

Ես ուզեցի ֆրնարով մի
Լոկ սիրել հոս՝ հոս դալկահար,
Պատշել՝ գրկել միայն ֆրնար,
Սիրող եակ նանչել զանի,
Ըստ իմ ֆրմաց լարել աղի,
Եւ սրսակցիլ սիրողաբար:

Նէ մօտեցաւ յուշիկ՝ ըսաւ.
— «Քրնարդ է ցուրտ սիրս՝ եւ սերբդ ցաւ:»

Թօթուեց թելերն հոգիս մոլար,
Ճանչեց ըզնէ գեղ ու կրրակ՝
Սիրսն անապակ ինչպէս վրսակ՝
Անմե՛ղ՝ ինչպէս սիւզ դալկահար՝
Հաւասարի՛մ ինչպէս ֆրնար,
Հրածե՞տ տուաւ կեանքի մեճակ:

Բոյլ մը նայուածք՝ փուրջ մը ժրպիտ՝
Քուրայ մը խօսք դիւրեց իմ սիրս:

1871



Լ Ճ Ա Կ

Ինչո՞ւ ապշած ես, լնա՛կ,
Ու չես խայսար քու ալեակի,
Միթէ հայւոյդ մէջ անձկաւ
Քեղուհի՞ մը նայեցաւ,

Եւ կամ միթէ կը զմայլի՞ն
Ալեակդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափթիթ՝
Որք նրմանին փրփուրիդ :

Մելամաղձոս լնա՛կ իմ,
Քեզ հետ ըլլանք մտերիմ,
Սիրեմ քեզի պէս ես ալ
Քրաւիլ, լըռել ու խոկալ :

Ո՛րքան ունիս դու ալի՛
Ճակասքս ա՛յնքան խոկ ունի,
Ո՛րքան ունիս դու փրփուր՝
Սիրսս ա՛յնքան խոց ունի բիւր :

Այլ եթէ գոգդ ալ թափին
Բոլլին աստղաց երկնփին
Նրմանիլ չես կրնար դուն
Հոգւոս՝ որ է բո՛ց անհուն :

Հոգ աստղերը չեն մեռնիր
Ծաղիկներն հոգ չեն մեռնիր,
Ամպերը չեն թռչիր հոգ,
Երբ խաղաղ էք դուք եւ օդ :

Լընա՛կ, դու ես թագուհիս,
Զի թ՛հովէ մ՛ալ խորճովս,
Դարձեալ խորփիդ մէջ խորով
Զիս կը պահես դողդղալով :

Շատերը գիս մերժեցին,
«Քրնար մ՛ունի սոսկ» ըսին .

Մին՝ «դողդոջ է, գոյն չունի—
Միւսն ըսաւ— կը մեռնի՛.»

Ո՛չ ոք ըսաւ— «հե՛ք սրդայ,
Արդեօք ինչո՞ւ կը մըխայ,
Թերեւս բլլայ գեղանի
Թէ որ սիրեմ, չը մեռնի:»

Ո՛չ ոք ըսաւ— սա սրդին
Պասռեմք սիրք սրմազին,
Նայինք ինչե՛ր գրուած կան...»
— Հոն հրդեհ կայ, ո՛չ մատեան:

Հոն կայ մոխի՛ր... յիշատակ...
Ալեակդ յուզե՛նք թող, լրնակ,
Զի քու խորքիդ մէջ անձկաւ
Յուսահաս մը նայեցաւ... :

1871

ԱՌ ՄԱՅԻՍ

Ծաղիկներու մայրի՛կ դու կոյս՝
Ո՞վ իմ Մայիս ծաղկահանդերձ,
Սա երփներանգ ծաղկօփղ հանդերձ
Է՞ր չը բերիր Ծաղիկն հոգւոյս :

Ռհ, միթէ կա՞յ այլ գուարբուն
Մայիս հոգւոյ Ծաղիկներու.
— Նա փողփողէ վերեւ գլխու,—
Մի դալկահար Մայիս անհուն:

1871



ՊԷՏՔ Է ՄԵՌՆԻԼ

Դժգոյն գիշեր մ'եր ֆաղցրաբոյր աշուանային,
Երկինքն աստղեր գերթ ասիրոյ վերք» ցոլային,
Դեղնած ու շոր քերթին՝ լուսին իւր բեկբեկ
Շողֆր ցողեր ամրան վարսիցն աղեբեկ.
Շամբերուն մեջ կը սողոսկեր ուղիս մ'անհետ,
Կայծեր՝ աստղեր կը խաղային այեայ հետ,
Սիւզը խաղար սերեւներուն հետ քեթել,
Կը շոյեր գլուխս՝ այրած նակաս վառե քել.
Նա իւր շնչովն իս գոհ ընել կը կարծեր,
Բայց կ'արծարծեր, ո՛հ, իմ սիրոյն բիւր կայծեր...
Ոգի մ'անցաւ արեւս, հոն թողուց ըսուեր,
Սւսեղց բոյլ մը... միայն գիտեն զայս աստղեր...
Համբոյրի մը յիշատակն եր սիւզին շունչ,
Իր դողդոջ ձայնն՝ սերեւներուն սա շրշունչ
Գունաս նակսին սիրիկ պասկերն այս լուսին...
— Ռհ՝ կեանք պե՛տք է սալ սիրտ տուի քե կուսին,
Կը սիրե՛ նե, նայուածքին մեջ կը թռամի.
Ռհ, ի՛նչ է նե. ձիւնով շաղուած մի անդրի,
Վսեմ նակսին վրայ գոյգ մը աստղեր վառ՝
Եթէ սիրե՛ հալի, թ'ասե՛ կտրի սառ...
Լակ հուր աչեր՝ ժրպիտ՝ արցունք տեսի նախ.
Կուրծս ուռուցիկ լանջ մը ըզզաց սիրաբախ,
Սիրոյ մեմունջ՝ հառաչ լսեցի բեկբեկ խօսք
Դողդոջ ու գիրգ՝ պաղ ձեռք մ'ըզզաց ձեռքը սոսկ,
Քեւերուս մեջ լոյս մը՝ հով մը մարեցաւ.
Էակ շեր ևե, այլ սեր՝ հուր՝ շունչ՝ ժրպիտ՝ ցաւ.
Գոհար աչեր՝ վարդ այտ՝ այլ ինքն եր քախիծ.
Այն գիսաւոր աստղեր «ֆար մը» մընաց ինձ...
Յիշատակ մը՝ գերեզման մը... սո՛ւրբ սափոր՝
Ուր հեկեկով սիրտս կ'ընե՛ միշտ քափոր... :
Երանի՛ քե ըլլամ ես շիթ մ'արտաւազ
Եւ անհետիմ դամբանիդ ֆով սիրտսուզ.

Իցի՛ւ թէ խոս մ'ըլլամ ու ես ցամփիմ հող,
 Ծաղիկ կ'ըլլամ՝ բայց առանց քեզ չունիմ հոս.
 Լոյս թէ մուր՝ փուն՝ շուքող պիտի շահնեսի,
 Հառաչելով ուր պիտի ըլլամ ոսկր ու դի,
 Շիրմիդ վարդը չը թոռմամ՝ քեզ գրկեմ ես...
 «Կեանք կուսաս, սիրս թէ սաս» ըսեն ետեւս:

1869

ՎԻՇՏՔ ՀԱՅՈՒՆ

Փոխանակ քաղցր օրօրներու, հայրենի՛ք,
 Որբանիս փոլ մայրիկս գեթ միտս ողբաց
 Համբուրին հետ շիթ մ'ըզգացի արժանուաց
 Աչերս սեսան արցունքներու լոկ երկինք,
 Աւերակաց ծաղկանցրդ սոսկ այցելու
 Զեփիւռն չեկաւ նժդեհ նակասքս շոյելու,
 Փառաց դարեր ծընող՝ ընկնող հայրենի՛ք,
 Մամոռս աւերք եւ դամբարան գորավիզ:

Արարատեան հսկայից
 Ուր ծոր նակսո՞վ վիրայից
 Հեծէ ոգին հայկական... :
 Բայց ի գո՛ւր, ողբ՝ վայ կական
 Եւ արժանուք ու հառաչ
 Քեզ սփոփել չեն կարող,
 Եւ վեն նակաս ֆրսնաւող
 Ի՛ր արիւնքաբուրդիս կող ու լանջ:

Մոխիր հագամ՝ արիւն ծրծամ սեւ հողեր,
 Ուր կը սիրեն սոսկում՝ իսուր յիշատակ,
 Այ թուր են ծոցեդ յուսոյ քաղցր հրեշտակ
 Եւ արիւնն դափնի մ'անգամ չեն թողեր... :
 Սեւ շղթաներ եղան ինձի խանձարուր,
 Մրրուքեան մե՞ջ արիս վրայ հսկեց սուր,
 Միքէ Հայ եմ՝ միջնդեռ չես իմս, Հայաստան,
 Եւ հոյակապ՝ վեա կոթողների պատուանդան.

Օտարաց գահդ՝ յիշատակ,
 Ի գլուխ կրես դու պրսակ
 Արդ փրճահիւս՝ սեւ նոնի...

Այ չք կա՞յ վառ թագո՞ւ անջի՞
Որուն ականց տեղ անգին՝
Դառնաթախի՞ծ մտածմանց
Քրտունքներ սառ՝ քար կտրած՝
Կննոս նակասրդ պննեցին :

Երբոր տեսաւ արիւնջուայ վարդին ծոց՝
Վարդասարփիկ բուլբուլն դողով քջեցաւ ,
Սիրագեղ լանջո՞ք կուսից տեսաւ երբ 'ի խոց . . .
Լքուեցին քնար՝ համբոյր՝ գեղգեղ եւ մտնուց ,
Հրածե՛՛ս սիրեց . . . եւ սիրակաթ շուրթեր մուց
Համբուրեցին սեւ հողեր՝ ժայռ եւ ալիք ,
Թոյլ թոյլ՝ բիւր բիւր ոգիք թռան սրտալիք :

Մասեաց մուսայք դողահար՝
Թողին պսակ եւ քնար .
Դաւեսեր՝ ձորեր եւ սարեր
Ալիք՝ ժայռեր եւ սառեր՝
Հե՛ք հայրենիք Հայաստան ,
Ըզե՛ք ըզե՛ք ողբացին՝
Որ ուրացողք քեզ բացին
Բիւր բիւր՝ սեւ սեւ գերեզման :

Հայն եր ուր թագրդ գրչորեց փայլարձակ .
Եւ ալեւոր նակսիդ բարդեց սեւ ամպեր .
Յետոյ վայեց՝ երբ գերեզման կը շապեր ,
Այլ շնչասպառ եր՝ չունեք ձեռքը կայծակ՝
Որ այն ամպերն փոթուկաբեր փարասեր ,
Եւ հայրենիքն շորաներէ ազատեր .

Նոնեաց խորքը մահուան շունչը սուսափեց ,
Սոսկմամբ ցնորած Հայն իր երկրէն խուսափեց ,
Թողուց աւեր եւ արիւն ,
Թաղեց հոն փառք եւ աւիւն .
Արդ կը տեսնէ բոթաբեր
Ներկայն՝ նիգ մը չը թափեր ,
Հայաստան , քեզ փրկելու ,
Անգգայ դարձած դարէ դարէ՝
Չը յիշեր քեզ , չը փութար
Քեզ անձկանոք գրկելու :

ՍԻՐԵՑԷՔ ԶՄԻՄԵԱՆՍ

Վարդակարմիր Գողգոթային վեհ գազար
Միտս փալփլող՝ սիրոյ անեհ՝ ճառագայթ
Դեռ կրսպասե՞ս թափել արտից փու սրլափ.
Զո՞վ կը հրսկես, վեհ եւ անդո՞ւնդ թե կմախփ,
Որ սեւ ժայռից մեջ մարեցաւ այն բեկբեկ
Բարբառն վրսեմ թե՛ «ըզմիմեանս սիրեցե՛ք» :

Ծածկե ամպով կարմիր կողերդ, Գողգոթա՛,
Եւ թող խայսան ցաւոս ոսկերէ՛ սեւ Յուդայ... :
Ժանգոս ու դուլ թուրերն առին կարմիր փայլ,
Նոր կրօնին հետ արեան ուղիս առին փայլ...
Թնդանօթին առջի բոմբիւն խեղդեց սեզ
Զֆաղցր հազագ թե՛ «ըզմիմեանս սիրեցե՛ք» :

Մարդագոհով Վասիկանի մըխացին
Ծխնելոյզքը կամարք «փառք» գոռացին,
Փոխ—Քրիստոս խաչն ըրին դասակ կացինի,
Սեւ դրօշ մը ասելու թեան արիւնի,
Դարուց մոխրէն կամ ամպերէն յուսայ հեք
Զրկեայն լրսել թե՛ «ըզմիմեանս սիրեցե՛ք» :

Տնանկին դամբանը կ'անհետի ոտնակոխ,
Տրնակին մեջ մարի առկայծ կանթեղն հող -
Այն մուրթին մեջ նօթի սրդեկ կը հեծեն,
Դդեակըն խրախ մինչեւ լոյս ջահի կը հիւծեն,
Հարուսին կառք ժխորով կ'անցնի սրաւաւ,
Հեքին դագաղն իր գերեզմանն լուռ իջաւ... :

Քեքսեմանին իջնող հրեշտակն դալկահար՝
Որ գեղ՝ ծաղիկ՝ արցունք ու փառք չը նանչնար՝
Նորա ցուրտ գոգն աղփաք սոսկ կ'ըստափի,
Ճոխն եւ սրնակ պասանփին մեջ կ'ըլլան մի .
Կայծակնաթել թե՛ մըռընչեն մըրրիկներ
Թե՛ «սիրեցե՛ք զիրար» հեքն հոս չեն սիրեր :

Ն Ե Ր Ա Ն Ե Տ

Համբոյր մ առի ներանէ,
Համբոյր մ'անհուն գորովի,
Երբ կարմիր շող մարեին
Հորիզոնին վերելի:

Չեռֆս սարաւ կուրծին հոն՝
Սիրոյ երկին մ'որոտար,
Թօշնեցայ գիրկն ես իբրել
Համբոյր մ'անհուն դալկահար:

Նէ գիս իր քով նստեցուց
Գորգի վրայ դալարեայ,
Հուսկ նանանչ մը պլպլար
Ներա դիմացը վրայ:

Թորովեցի . . . դողացի . . .
Առի համբոյր անհամար,
«Խօսինք» քսաւ — ո՛հ, խօսի՛լ,
Հասնիլ է լոկ ինձ համար:

Աչերու բոցն երբ մարի,
Դադրի սրոփն երբ սրտին,
Լոկ այն ասեմ հարկ է որ
Անգոր շուրթերն խօսին:

Հուր հորիզոնն մարեցաւ,
Երկինք աստղեր փթթեցան,
Համբոյր մ'առի դարձեալ ես
Յանուն աստղոց ցիր ու ցան:

Նէ թողուց որ վարսն ազատ
Սիւզը դեպ յիս բերելով
Միտս հովահրէ բրուրնկած
Ճակասիս զով բոյրերով:

Ո՛հ, այն ժամը ոսկեգօծ
Անուրես սահած թռած է

Ճակասագրին անողորմ
Սեւ ձեռքերէն երկաթէ :

Մեր համբոյրներն պահեցին
Տերեւներն խառնափմամբ,
Եւ շողերու սրւին շուք
Աստեր երկնից այն անամպ :

Ձեռք վերցուցինք աստուան,
Սեր ուխտեցինք իրարու,
Դողդողացին աստերն ալ
Մեր երդումէն ահարկու :

Լքսեց երկինք մեր ջերմ ուխտ,
Աստեր սրսկեց ի գորով,
Բընութիւնն եղաւ պսակիչ,
Մեզ պսակեց աստերով . . . :

1871

Ն Է

Վարդը գարնայնի
Թէ կոյսին տիպար
Այսերուն չըլլար՝
Ո՞վ յարգեր զանի :

Թէ չը նմաներ
Կապոյտն եթերաց
Կոյսին աչերաց՝
Երկինք ո՞վ նայեր

Թէ կոյսը չըլլար
Սիրուն ու անբիծ,
ԶԱստուածն այն երկնից
Մարդ ո՞ւր կը կարդար :

1871

Ա Ռ Կ Ո Յ Ս Ն

Ոհ, մինչ ց'ե՞րբ, ըսէ՛ ո՛ր կոյս, հոգիս բլլայ գեղոյդ գերի,
Եւ մինչեւ ց'ե՞րբ թրթռան աղիք ցաւած սրսիս եւ քնարի,
Լոկ համբուրիկ մ'ուզեցի՝ քաղել այսեղ մէկ թարմ վարդ,
Ճառագայթ մը խնդրեցի աչերեղ երկնագուարթ,
Զլացար դու անգո՛ւթ, վարդ մը տօգոյն նակսիս,
Եւ ճառագայթ մ'այն անդունդին խոր սրսիս,
Ոչ, ես չեմ կրնար ապրիլ գուրկ գրկեղ,
Ծիծառնիկն ապրի դուրս բոյնէն գէթ.
Տրտալար քնարս զարնեմ ջախջախ
Քոցեմ սիրսս սիրաբախ . . .
Մնայք բարով կո՛յս եւ քնա՛ր
Կոյսին տեղ լա՛ց, քա՛ր,
Ճակասքս նրսեմ,
Հանգչեցնեմ,
Մառող
Հող :



Կ Ո Յ Ս Ն Լ Ք Ե Ա Լ

Հայեց սառեր գարնան արեւ,
Ոսկի մասամբք ծաղիկ՝ սերեւ
Յանեց, ցրուեց ամպ ու բայ փոյթ,
Պարզեց աստղոց կամարն կապոյտ:
Ո՛հ, ինչո՞ւ կուսին
Նայուածքն է մթին:

Ոսկի սրփռեց լերանցն արփի,
Ծիծաղեցաւ լուսինն յ՛ալի
Կա՛յծ ու ծիծաղ, ծաղիկն համբուն,
Թերթեր՝ ուր սեր կարգայ գուարթուն
Ո՛հ, ինչո՞ւ գունաս
Է կոյսին նակաս:

Բուլբուլն թառեր թաւոս թփին՝
Գեղգեղէ գե՛լ աղիօք արտին.
Թռչունք մըթին անսառաց խոր
Չայնակցին, հեշտ սիրոյ ժրխո՛ր...
Ո՛հ, ինչո՞ւ լինի
Լուռ կոյս լեզուանի:

Ալիք սիրոյ ցոյց սան ձայն՝ նետ
Մրմունջ՝ նայուածք սանելով հետ,
Ջրբել կ'երթան ծաղկոս մարմանդ
Թօթիկ խոտէն հովն աղամանդ:
Ո՛հ, ինչո՞ւ արսուկ
Թափէ կոյսն ի սուգ:

Ի գրանց ոսկի արեւելիին՝
Իջներ զեփիւռ ցողիկ հեշտին՝
Ծաղկանց՝ ալեաց՝ թերթից համբոյր
Տալով՝ սահին թողլով համբոյր.
Ո՛հ, ինչո՞ւ հառայ
Հանէ կոյսին լանջ:

Ո՛ր կոյս, ինչո՞ւ այսպէս սրտւմ
Սամոյր հոպոպֆո արսասուլարմ
Դեմքդ սիրուն ծածկեն, վերցո՛ւր
Ճակասդ, շնչե սեր՝ լոյս ու բոյր .

Անկողիցդ ծաղկունք՝
Ասդեր քեզի շուք :

—Սիրէի ես ասդերն երկնի,
Ային գ'իս ցոյց տար գեղանի՝
Վայլեր ծաղիկ նախքա անսուգ,
Զեփիւռն ունէր հետք փրսփրսուք .

Մասնելու գկուսիկ
Հրապո՛ւրք խաբուսիկ» :

1870

ԶՕՆԻԿՔ

Մինակ էր .
Վարդ մ'ըզգօն
Մասուցի
Ներա ձօն :

Շիկնեցաւ
Նե գուարթ՝
Կ'բնդունէր
Երբ իմ վարդ :

Ներա քով
վարդն ո՛րչափ
Էր անշուք
Գունաթափ ,

Նոյնպէս ձօնս
Համբոյրի՛ն
Զոր տուաւ՝
Զեր բնաւ գին :

1871

ՆԱՅՈՒԱԾՔ ՄԸ

Ամրան տապէն ես խոնջած՝
Թաւուսքի մը բիւր բիւր կայծ
Տերեւներուն շուքն ինկած՝
Ռրչափ սիրեմ շունչն հովսաց՝

Մեղմիկ
Հողմիկ :

Արշայուսին կանուխկեկ՝
Ռրչափ սիրեմ՝ ոսքս մերկ
Կոխելով մարգ ծաղկաներկ՝
Լուացուելու գտնել մեկ

Յրսակ
Վրսակ :

Երբ միայնակ ես գամ ման ,
Ռրչափ սիրեմ՝ կրրակներս մերկ
Ներշնչելու սերս անձայն՝
Հոտոտելու կուսի նման .

Քաղցրիկ
Ծաղիկ :

Երբ հոգանի աստղազարդ ,
Ըլլայ երկնից գմբեթարդ ,
Ռրչափ սիրեմ՝ ի սաղարթս ,
Երբ կը հիւսէ երգ ի վարդ

Թրթռակ
Սոխակ :

Բայց զասունք չեմ փոխեր բնաւ
Մեկ նայուածքին հետ անբաւ՝
Թէ ուղարկէ ինձ հեռետաւ
Իր աչերէն վառ ու սեաւ

Լուսիկ
Կուսիկ .

Դ Ր Ժ Ե Լ

Խոււք մը կննիո՛ւ՝ բուռ մը կայծակ՝
Դրժոխք մ'անեծք խոցեց հոգեակս :

Ես ուզեցի պաշտել ըզնե՛ ,
Սիրել ժպիտքն՝ փրփի՛թք անհուն,
Սիրել աստղերն սել աչերուն
Եւ այն խոկումն որ մըթագնե՛
Պայծառ նակասք՝ այն ամպն է
Որ կըսայարե՛ դեմք լուսնոյն

Գիշեր մը սուլ՝ անդունդ մ'հառաչ
Յուզեց ներս հոգին ու լանջ :

Ես ուզեցի միտք փոխել ըլլալ,
Մըտիկ ընել թնդիւն արտին,
Շնչել՝ խրմել ներս հոգին,
Եւ շօշափել լոկ ձիւնափայլ
Ծոծրակին վըրայ ծալ ծալ
Թափող վարսից ալեակք ծըփին :

Ովկեան մը սրտունջ լսեցի,
«Զիտ կը նեղե՛ս» — հծծեց ինձի :

Ես ուզեցի փրնար մ'ըլլալ
Ներս ձեռքին տակ հեւացող,
Ներս հոգւոյն խորն հիացող
Թեթել պատկեր մ'ըլլալ շարժեալ,
Մոռնալ գիտ, լոկ ըզնե՛ խոկալ՝
Կ'վառե՛ երազ մ'որուն մեկ շող :

Ամպրոպ մը սաստ ցնցեց հոգիս
Գոչեց — սիրել չ'ես կրնար գ'իս :»


Ի գո՛ւր սիրքս մըխաց առաջին՝
Խնկարկելու սիրն անապաս .
Յուզի իրեն տակասս գունաս՝

Կուրծրս գոգած՝ մարն իմ աչքին,
Ի զո՛ւր շուրթերս դողդոջեցին,
Զինքը սիրելիս հծծեցին յայս,
Նէ հեռացաւ ինձնէ, ըսաւ,
— Բա՛ւ սիրեցի քեզ, մնաս բարեա՛ւ : »

Որոտացին խոհմանցս ամպեր,
Կայծակնահար բրին հոգիս,
Մոխիր դարձան երազներս յ'իս,
Ճակասագրիս խնծղաց ի վեր,
Խորշ մը կար որ գիս կը ծաղրէր,
Այն լուռ փոսն էր գերեզմանիս . . . :
Խու՛մբ մը կննիռ՝ բուռ մը կայծակ
Դժոխս մ'անեծք խոցեց հոգեակս . . . :

1871

ԶՆԷ ՊԱՇՏԵՄ



Ճառագայթի ու վարդի
Փրթումներով վեհապանծ
Ես չը սիրեմ սա դեմք
Սիրոյ ժպտով մը օժած :

Ես չը սիրեմ երբ կոյսի մ'
Աչերը գիս բուրվառեն՝
Զերթ հուր ամպոց գոյգ մը հիւս
Յօնիցը սակ մեղմօրէն :

Գիսասդի պէս հերարձակ՝
Ես չը սիրեմ սա վրնիս
Կոյսն՝ ոյր դեմքէն կը փրթին
Լուռնի դալուկն ու ժրպիս :

Ես չը սիրեմ՝ հանդիպիմ
Երբ կոյսի մը հեզանագ,

Որ եղեմ մը կը բուրե,
Վառե երկինք մը երազ:

Ես չը սիրեմ սա կապոյտ
Զոյգ մ'երկիններն գինովցած՝
Ոյր մեկուն մեջ պաշտի նա
Եւ միւսին մեջ ալ Ասուած:

Ես չը սիրեմ սա օրա:
Փրպիտները յուսաւորո՞ղ՝
Որք ծաղիկներ են սուս սուկ
Մըտի անդունդը ծածկող:

Ես կը պաշտեմ գ'իմ Պիսոս,
Ինձ կը բաւե իր սրտին
Մեկ նառագայթը միայն,
Եւ մեկ վարդն իր ժրպիտին:

Թեեւ սեւ աչն հեղեղեն
Անթիւ աստեղց միշտ բոյլեր՝
Իր սեւ յօնից շուքին սակ՝
Զորս ութ օրն է նա գրծեր:

Լուսինը ո՛չ ներա վարքն՝
Եւ ոչ ալ վարդը ունի
Ճառագայթումը ներա,
Ճառագայթո՛ւմ սիրողի:

Ես դողդողամ իր վրայ,
Նե իմ վրայ գորովի,
Իսկ թէ մոռնա՛յ զիս օր մը...
Ա՛հ, այն օրը քա՛ր կտրի...:

1871



Ս Ե ՚ Ի , Ս Ե ՚ Ի

Երբեմն հոգիս ասողի մը բոց
Եւ թիթեռնի մ'ուներ թելեր.
Վերջալոյսի նրման ամպոց
Երազներ՝ հո՛ւր նակասս վառեր:

Արգ սառույցներ դառն արսուրի
Կը փարանան կուրծիս ներքեւ,
Եւ բարդի ամպոց սեւաթորմի
Կ'ուզեն խեղդել սիրսս ու արեւ:

Հազիւ փանի մ'օրերն կեանքիս
Ոսկեզօծ իմ բախսը վաս՝
Որոնք եղան լոկ ովասիս
Մեղմուղ կիանքից դառն անապաս:

Մեհանայի օրեր ցվերջ
Երբեմն՝ հովտի ծաղկանց լ'երկնի
Զիւնադրրրիք ամպերուն մեջ,
Կիանքի մրուրն ես թափեի:

Ծրծեի սե՛ր . ծրծեի կեանք,
Մինչ վերջալոյսն կը հրահրեք
«Մնաս բարովի» սա կարմրուրակ՝
Տրիսուր կրակ լ'երկնի բոցեր:

Ունեի ես երբեմն առաս
Վարդեր՝ առաս ասդեր նոյնպէս,
Հակասազիրս սեւ սեւաւ շա՛նս,
Փրցուց, փաղեց զանոնք արեւս:

Ունեի ես իմ սիրունիքն
Որոյ թեպէ՛տ աչքն եի՛ն սեւ,
Սակայն սրգալ չը գիտեիք...
Հրե՛տակ մ'էր նե՛, հրե՛տակ անթել:

Սեւ երա՛յ մը օր մը դողդոջ
Մըղեց զիս սեւ փոսի մ'առջին

Ուր քար կտրած՝ սիրս ի թնդոջ՝
Դագաղի մ'աչքս յառած էին :

Աւանդ ներա վարդին ու ասդերն
Լուռ պիտի տար կուլ այն սել փոս,
Ցուրս համբոյր մը առի նակսէն,
Ներա վերջին ձօնն էր ափսո՛ս :

Եւ լքսէի յայնժամ՝ թի թի
Սել սել հողեր կոտս թնդեցին
Տրխուր ֆոյփին վրայ փայտի...
Դրժողք մ'անէ՛ծք այն սել օրին :

Այն ցուրս հողերն յ'իմ դասարկ սիրս
Լըցուցին, փոսն գոցելնուն հետ՝
Եւ այս աշխարհն ալ անժպիտ
Գոցեցին իմ արջել յաւե՛ս... :

1871

ԻՄ ՀԱՆԳԻՍՏԸ

Եթէ մօտի հողակոյտիս,
Թուխ մոխրագոյն լ'աչեր ներա,
Թէ ջուխս մարգրիտ թափին իմ վրայ,
Չը ցուազնիր ոսկերոտիս :

Ա՛յս իմ հանգիտ՝
Իմ լրուանիտ,
Ա՛յս օթեւան
Խաղաղութեան :

1871



ԿՈԿՈՆ — ԾԱՂԻԿՔ ԿՈՒՍԻՆ

Լուսափրփիք 'ւ անարաս
Ձոյգ մ'աշխարհներ ես տեսի
Ճառագայթից' բոյրերու
Եւ փափկութեան ու լոյսի :

Ռհ, չե նոցա պէս անբիծ
Իսպական վեհ երկին ,
Եթէ շունին աստեղց բոյլ,
Ամպ ու կայծակ ալ շունին :

Ռհ, յաւիտեան միշտ կապն
Կարծես զոյգ մը ծաղիկ են ,
Բայց նման կոյս արտերու՝
Կարի ֆաղցր կը բուրեն :

Ձեռք կարկառել ա' աշխարհաց
Ակնախրսիղ ու անտես՝
Յանդուզն ըլլալ է լոկ ֆան
Ձաշխարհակալն Արսաշես :

Ի՞նչպէս արդեօք կերտց նա
Լուսագունդներս այս դողողոջ,
Նա աշխարհի ֆան ըզկերտ՝
Մտածեց ոգի տալն կրնոջ :

Կը դողդողան իմ շուրթեր
Հըպիլ սիրոյ այդ խրոնով
Կոկոն-ծաղկանց՝ խամրելու,
Արատելու երկիւղով :

Այլ ո՛ր շուրթն յանդգնի
Հըպիլ հրաշից այդ լուսէ,
Կ'երդնում յաշխարհն աստեղաց
Թէ նա դար մը կը ծրծէ :

Ի ՔԵՐԵՋՄԱՆՆ

ԱՄԵՆՍԻՐԵԼԻՈՅ ՎՍՐԴԱՆ ԼՈՒԹՅԵԱՆԻ

Հ Ե Ծ Ե Ծ Մ Ո Ւ Ն Ք

Ո՛հ, երկնքի ժապաւեցներ՝
Ճառագաթներ միացուցած՝
Էին արտեր մեր միմեանց՝
Մեր արտեր սիրանքեր :

Նոքա միմեանց համար քանի՛
Էին անհո՛ւն բա՛ց մասեաններ,
Հո՛ն ամեն բան խորի մը ունէր
Իր ներքեր սիրոյ, ցաւի :

Ո՛հ, կը յիշե՞ս, Չամլընայի
Սարը նսսած լուռ մրիալինք,
Ուր շուք սային մեզի նոնիք՝
Սեւ հովանոցք վրժսահարի :

Ըսքամայօլի կապոյտ գօսւոյն՝
Վոսփորի ծուփը դիտէինք,
Ուսկից եւ մերք զանամայ երկինք .
Ո՛, ախորժներ լուռ մեր հոգւոյն :

Այն հիւսկեցներն երկրնքին՝
Այն ամպերը ձիւնաբորմի՝
Մինչ երեկոյ, ո՛հ, մի առ մի
Մեր նայուածքը գրաւէին :

Չէինք խօսեր, խօսքն մեր հոգւոց
Անհունուրիւնը կը պղծէր .
Մենք գերք երկու ծոցոյն բոցեր
Իրարու մեջ կ'այրէինք սուկ :

Մեր հոգիք նոնիներու
Թուխ քիթուներ էին սրտում,
Մէւ ծրծեից, սո՛ւզ անհասնում,
Նայեից միշտ երկրես հեռու:

Անյուսուրբի՛ւն, գերեզմանի
Այդ սել կարք շա՛ս քմայեցից
Քեզ յափրեցուց այդ ըմպելիք,
Եղար երկնից սրժգոյն որդի:

Քու դայուկդ զիս ցուցուց շա՛ս,
Եւ նայուածքդ վերջին նըւադ՝
Ջոր ուղղեցիր ինձի, աւա՛ղ,
Բեւեռեցուց յիս յիշատակդ:

Երջանի՞կ ես հոգ քե քոււան,
Ջուարքնոյ քելով լուր մ'իցն՝ դրկե՛.
Ս'հ, այս աշխարհս միշտ տաղսն՛ւկ է...
Ցաւերու մեծ մայր մ'ե աշխարհ:

Ռհ, եքե հոգ ծանի մը շուք
Կայ, եւ նորա քով մեկ վրտակ,
Եքե կայ հոգ սեր անապակ,
Կան ազատ օդ, ազատուրբի՛ւնք,

Ռհ, կը քօրվեմ ես այս աղտոս
Չորձն հոգւոյս՝ կեանքս՝ միցն իսկ
[այսօր

Հող կը հազնիս, հո՛ղ սրգաւոր...
-Ս'հ, ուզածներս, վարդա՛ն կա՞ն հոգ:

1871



Հ Ծ Ծ Ի Ի Ն Ք

Երբոր վարդի փունջի հայեցի՝
Ծրլան սրժգոյն նակսիդ վերել,
Խոնարհեցիր աչերդ արել,
Քեզ այն օրէն ես սիրեցի:

Թերթեր յուզող սիւզի մը պէս
Թրուար՝ սրտիս ծալներն բօքվել,
Քնարի մը կըրակէ թել՝
Քեզ ձրգեցիր դու աղիքս:

Արդ կը փախչիս ինձմէ սիւզի
Պէս, շուքդ տաս լոկ քնարիս
Գիսասդի պէս բաց կ'նազիս՝
Հովին տուած մազերդ ոսկի:

Երբ աստղալոյց գիշեր է գով,
Շրջագայիս, ո՛ սիրելի,
Քեսե՞ս թէ սիրես ո՛րչափ մաշի՝
Քու հմայող հայեցուածով:

Գայ սիւզն գով քեզ այցելու,
Նային քեզի աստղերն ազաս,
Ըսուերին մեջ մինակ ու գաս՝
Ես կը դողամ քեզ մօտելու:

Ո՛հ, թող երթա՛յ սիւզն իր ծաղկոց,
Նային աստղի թող յ'Ովկեան,
Եւ թող մեկ մ'ե՛ս ալ դալկանա՛մ
Մեջ նայուածփիդ կրակուրոց:

Մահիկն երբոր շառագունած
Իջնէ լեռնէն ի հորիզոն,
Ալ կ'անհետիս, չես շրջեր հոն՝
Կազին՝ հովին՝ աստղին դիմաց:

Շիրմանց մեջի ցուրս ցուրս ծառեր
Կը փրսփրսան մեռելոց հետ,
Սրսիս թելերն իմ դառնադէտ
Տան արձագանգ մահահրաւեր :

Նըւաղած են լոյս ու ժրխոր,
Դադրած շրշիւնք արտես մունջ,
Արդ կը թաղուին համբոյր՝ մրմունջ
Քստեղազարդ անդունդին խոր :

Քու ֆայլերուդ խտրտւն յար
Կը մրմնջէ դեռ ապանջիս,
Հեծկլսալով իջնէ հոգիս
Արտարալից անդունդ մ'ի վար... :

1871

Ն Ա Ի Է Ր Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի

Ա Ռ Պ. Յ. Հ Ա Ն Յ Է Ս Ճ Ե Ա Ն

Յ Ո Ի Շ Ք

Սա խաղաղ մայր — Ովկեանին՝
Ուր փողփողեն աւազ ոսկի՝
Մեր երազոց վառարանին՝
Թ'եզրէն՝ վարդից մեջ անիւնի
Սրբ արեւը շողշողէ՝
Դու իմ սերը միտս յիշէ :

Թաւունսք մը կանանչ ու մորչ՝
Որոց շուքը սիրէինք միտս
Նսսիլ՝ խօսիլ շրթամբք դողդոջ՝
Ծրծել անյագ իրարու սիրս՝
Սրբ՝ սերել մը խաւրճափէ,
Դու իմ մրմունջքը յիշէ :

Առաւօտներն գարնանային՝
Ռհ, հորիզոնն ալ վարդավառ՝
Յ'այց ելնելուդ ծաղկած մարգիւն՝
Ուր կը գտնես մորչ չոր մացառ,
Երբ թռչնիկ մը նըռւողէ,
Դու իմ իղձերը յիշէ՛ :

Պաղարպաշի ելած աստն՝
Եւ կամ սա՛րը Չամլընային՝
Սիրո՛ւն վայրեր ուր միշտ արդէն
Ճեմել հոգիք մեր սիրէին՝
Երբոր զեփիւս մը փրչէ,
Դու իմ հոգին միշտ յիշէ՛ :

Եւ առօրեայ աշխատանք
Վաստակաբէկ վերադարձիդ՝
Եւ կամ սիրոյ արեւանք
Դարձած աստն սրոփ ի սիրս՝
Երբ հորիզոնն հրդեհէ,
Դու իմ կրակները յիշէ՛ :

Ամրան գիշեր մ'երբոր գտնես
Ասդերն առաս գլխուդ վրայ՝
Եւ լուսինը լապտեր բնես
Դողդոջ ֆայլից դէպ ի Մօսայ,
Երբ շրջազգես մը շրջէ,
Իմ մաշած սիրսը յիշէ՛ :

Տրտմ նսած դու պատուհան՝
Յառած երկնից այն սելերես՝
Սել մըսածմանց լոկ վառարան
Տժգոյն նակասդ եւ աչերդ վէս՝
Տըխուր կոչնակ մ'երբ հնչէ,
Մըսերմիդ մա՛հը յիշէ՛ :

Ի Մ Մ Ա Ն Ը

Եթէ տղոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ...

Շոգիանան ցաւս ու հոգիս,
Քիտցե՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ սրնարքս՝ իմ տպար
Մով մը վտիտ ու մահադէմ
Ո՛հ նշույն, ցուրտ նառագայթ,
Քիտցե՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ նակտովս արտաբազօծ
Զիս պատանի մեջ ցուրտ գերթ վե՛մ
Փաթթեն, դնեն սեւ դագաղը,
Քիտցե՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ հնչէ սրխուր կոչնակ՝
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ,
Դագաղքս առնէ իր յամբը քայլ,
Քիտցե՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ մարգիկն այն մահերգակ՝
Որք սեւ ունին եւ խոժոռ դէմ՝
Համաափռեն խունկ եւ աղօթք,
Քիտցե՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթ՛ յարդարեն իմ հողակոյտ,
Եւ հեծեմամբ ու սգալէն
Իմ սիրելիք բաժնուին,
Քիտցե՛ք որ դեռ կենդանի եմ:

Իսկ աննշան եթէ մնայ
Երկրի մէկ խորն հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ յառամի,
Մ'հ, ա՛յն ատեն ես կը մեռնիմ...:

ԻՆՉ Կ'ՐԱԵՆ

Ինձի կ'ըսեն— «ինչո՞ւ լուռ ես.»—
«Ո՛հ, միթէ բառ կամ խօսք ունի՞
Արեալոյսը որ կը բռնկի,
Զի անհուն է այն այ ինձ պէս.»»

Ինձի կ'ըսեն— «միտ՞ես ժողովրդ ես.»
«Ի՞նչպէս չըլլամ, մեկիկ մեկիկ
Թօթափեցան գլխուս ասղիկք...
Արջալոյս մը շանցաւ սրէս.»» :

Ինձի կ'ըսեն— կրակո՞ս չես,
Լքնակի մը պէս ես մեռած,
Դալկահա՛ր դեմքդ ու հայեցուած. :—
«Ո՛հ, յասակն են իմ փրփուրներս.»»

Ես ինձ կ'ըսեմ— ժամդ է հասեր,
Քու եկրորդ սել մօրդ գրնա գոգ
Պերեզմա՛ն, հո՛ն գտես դու գոգ
Վարդեր՝ թրթռում՝ թռիչ ու ասղեր... :»

1871



*
* *

Ահա սրանայ օրն երջանիկ՝
Ի յիշատակ ոսկեղենիկ,
Յորում լըցան հե՛ք հոգւոյս իղձք,
Ետնն սեղի սրեւս թախիձք,
Թարմացան հոյլ վարդք ոսկեփունջ
Կենացս պատեաց բուրում գիւմ շունչ
Եւ կարե՛ ոչ սրտիկն իմ վառ՝
Գոյ գոհ, յագիլ լոկ 'ի կիթառ,
Զհոգիդ ըզ սիրս եւ ըզ բարիս,
Դու որ յարսուր գհիֆօք փարիս,
Փրկչին մերոյ արձանն տպար՝
Փոյթ թուառաց 'ի մխիթար
Դու որ սփռես գոամբանօք վարդ,
Տաս ցոյց գերկինն յարկնարկ զըւարթ
Երգես սոխակ 'ի գիշերի,
Ո՛ր ի գեղգեղդ սոսկումն ցրեմ
Գերեզմանաց խօլ արհաւիրք,
Պարգես զբարեաց զյաւերժ երկինք:
Քե՛ւ, քե՛ւ շնչեմ ես յայս յաշխարհ,
Եւ հուդ 'ի շունչ մխիթար
Սիրելեացս խոր փակեցան փոսք,
Ասեղք յերեւ գան լուսահոսք,
Յորչափ են թիւ՝ կեա՛ց առ յապա
Ասեղաց վառ՝ ցորչափ նոքա,
Ի՛ի յալիսըդ ձիւնափառ
Ըսփոփես գհեքս հոգեբարբառ,
Ի՛ի դամբանս եկ առ ի գուրթ՝
Ըզփրկուրեան մնջել զաղօթ:

Տ Ր Տ ՈՒ Ն Ձ Ք

Է՛, մընաք բարով, Ասուած եւ արեւ՝
Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերեւ . . .
Ասդ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից,
Ասդերն ի՞նչ են որ եթէ ոչ անբիծ
Եւ բռուառ ոգւոց անե՛ծք ողբագին,
Որք թրոխն այրել նակասն երկնքին.
Այլ այն Ասուծոյն՝ շանթերո՛ւ արմաս՝
Յաւելուն գեցեցն ու զարդերն հրբաս . . . :
Այլ, ո՛հ, ի՞նչ կ'ըսեմ . . . շանթահարե՛ գիս,
Ասուա՛ծ, խոկն հսկայ փերե՛ հիւլեխս՝
Որ ժբայրհի ձգսիլ՝ սուզիլ խորն երկնի,
Ելնել ասդերու սանդուխտն ահալի . . .
Ողջո՛յն քեզ, Ասուա՛ծ դողդոջ եակին,
Շողին, փըթիթին, ալւոյն ու վանկին,
Դու որ նակսիս վարդն ու բոցն աչերուս
Խըլեցիր թրթռումս քթանց՝ թռիչն հոգւոյս,
Ամպ սըւիր աչացս, հեւք սուիր սըրսիս,
Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժայսիս,
Անուշտ ինձ կեանք մը պահած ես ետքի,
Կեանք մը անհուն շողի՝ բոյրի, աղօթքի.
Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մեջ համբ աշտունչ,
Այժմե՛ն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,
Պըլլուիմ անուանդ, մըռնչեմ անդադար,
Թո՛ղ անե՛ծք մ'ըլլամ ու կողբդ խրիմ,
Թո՛ղ յորջորջեմ քեզ. «Ասուա՛ծ ոխերիմ»:
Ոհ, կը դողդոջե՛մ, սժգոյն եմ, սժգո՛յն,
Փըրփըրի նե՛րարս դըժոխսքի մ'հանգոյն . . . :
Հառաչ մ'եմ հեծող նոներու մեջ սեւ,
Թափելու մօտ չոր աւնան մեկ սերեւ . . . :
Ոհ, կայծ սըւե՛ք ինձ, կայծ սըւե՛ք, ապրի՛մ . . .
Ի՛նչ, երազե՛ վերջ գրկել ցուրտ շիրի՛մ . . .

Այս նակասագիրն ի՛նչ սեւ է, Ասոււա՛ծ,
Արդեօք դամբանի մրուրն՝վ է գծուած...
Ռհ, սրէ՛ք հոգւոյս կրակի մի կաթիլ՝
Սիրելի կ'ուզեմ դեռ լ'ապրիլ ու ապրիլ՝
Երկնի աստե՛ր, հոգւոյս մեջ ընկէ՛ք,
Կայծ սրէ՛ք կեանքի՛ ձեր սիրահարին հեք,
Քարունն ո՛չ մեկ վարդ նակսիս դալկահար՝
Ո՛չ երկնի շողերն ժրպիտ մ'իկնձ չ'են տար,
Քիշերն միտս դազադս, աստերը ջահեր,
Լուսինն յար կուլայ խուզարկէ վրիեր՝
Կ'ըլլան մարդիկ որ լացող մը չունին,
Անոր համար նա դբաւ այդ լուսին.
Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան,
Նախ կեանքը վերջը՝ լացող մ'իւր վրբան :
Ի գո՛ւր գրեցին աստերն ինձի «սէ՛ր»,
Եւ ի գո՛ւր ուսոյց բուլբուլն ինձ «սիրելի»,
Եւ զիս նորասի ցուցուց ջինջ ալին,
Ի գո՛ւր թաւուսներ լրուեցին իմ շուրջ,
Քաղցնապահ սերեւք չառին երբե՛ք շունչ,
Որ չը խրոնվին երազքս վրսեմ,
Թոյլ սրւին որ միտս ըզնէ երազեմ,
Եւ ի գո՛ւր ծաղկունք՝ փրթիթներ գարնան՝
Միտս խնկարկեցին խոկմանցքս խորան...
Ռհ, նոքա ամենքը զիս ծաղրեր են...
Ասոււծոյ ծաղրն է Աւիսահն ալ արդէն... :



ԶՂԶՈՒՄ

(Օր մը վերջը)

Երեկ երբ պաղ ֆրանց մեջ
Ֆուրս մըրափ մը կ'առնէի,
Զոյգ մը վարդից ել եւ եջ
Այտրուս վրայ այրէի,
Վերայ ճակտիս իմ մահու
Դակուսիւն մը պըլպլար,
Վերայ հոգւոցս սիրարկու
Անկաւ շունչ մօրս որ կուլար...
Բացի աչքս խոնջած,
Գթոյն արտօրք տեսի...
Համբոյրն յերեսս հանգչած
Սուրբ յիշատակ մի վերջի... :
Յոր մայրս անհո՛ւն ցաւ մ'ունե՛ր
Այն սեւ ցաւը ե՛ս եի...
Ա՛հ, գըլուխս փոթորկեց...
Այս սեւ հողերն դուրս տըի...
Ա՛հ, ներե՛ ինձ, Ասուա՛ծ իմ,
Մօրս արտօրք տեսի... :

1871

ՄՆԱՍ ԲԱՐԵԱՐԻ

Առտու մը դեռ մթնշաղ՝
Կը ծաւալէր շող ու շաղ,
Ծաղկանց մեջ քեզ տեսայ ես,
Կը ժրպսէիր յուսնոյ պէս:

Աչերդ սիրոյ Ասրուշան,
Մասներդ եին գիրգ շուշան,
Այսերդ վարդի նոր թերթեր,
Նայուածքդ ծներ նոր եթեր:

Սիրքս թռա՛ւ ոսփիդ տակ,
Սիրեցի քեզ, իմս հրեշտակ...
Սիրով եղան ձիւն մազեր,
Ըսին՝ կեանքը երազ էր:

Մինչդեռ դու չես սիրեր զիս,
Մ'իշխեր գոնէ սկար սրսիս.
Ուր որ երթամ դեմքդ ինձ հետ՝
Նայուածք չէ՛ այդ... մահո՛ւն նետ:

Երբ անտառին խորն նրսեմ
Կ'երթամ լայ՝ յուռ մեցանեմ.
Դարձեալ հոն կը գտնես զիս,
Տերեւներէն կը խօսիս:

Երբ առուակին եզերք՝
Նրսիս սփոփել իմ վերք՝
Դարձեալ դու կը գտնես զիս,
Ալեաց մեջէկ կը ժպտիս:

Երբ լեռներդ կը փախչիս,
Որ չը տեսնեմ քեզ՝ հանգչիս,
Հողմոյն մեջէն կը խօսիս,
Թէ՛ դու բնաւ չե՛ս սիրեր զիս:

Լուսնի լուսով գիշերը
Երբ ցօղեն իմ աչերը
Գարձեալ դու կը գտնես զիս,
Ասդերու մեջեն կը ժրայիս:
Իսկ գերեզման երբ մտնեմ,
Քեզ հոն պիտի չը գտնեմ...
Մնաս բարեա՛ւ... հայունիս,
Անգո՛ւք, արցունք մ'ալ չունիս:

*
* *

Փոխանակ քաղցր օրօրներու...
Որբանիս քով մայրիկս ըֆեզ միտ ողբաց
Երբ համբուրեց զիս՝ իւր այտերն էին թաց,
Թշուառ մ'էի, աչերս արցունք նախ սեսան.
Սիրուն գրկեղ հեռու աչերս ես բացի
Այլ բնագոյմամբ ես քեզ համար նախ լացի իմ անուշ
Նոնեազարդ իսուր դամբան այդ անյուշ՝

.
.

1868 Յունիս 28



ԿԸ ՍԻՐԵՄ ԶՔԵԶ

Ոհ, ո՛վ ես դու, սե՛ր, երկնային շո՛ւնչ կամ հո՛ւր,
 Քու սեւ անո՛ւտ աչերըդ շունի գիշերը,
 Վարդը շունի ֆու լանջոյ անբիծ ձիւնաթոյր,
 Լուսին շունի ֆու վարդագոյն այտերը :

Ցայգն՝ ասուերուն փաղփուն՝ լուսնոյն սիրադեմ,
 Ցերեկն ալեաց, ծաղկանց ժրպսիս, մեկուն... գեթ
 Իսկ քեզ համար ես արցունքով կ'աղօթեմ.
 Դու չես շնորհեր նայուածք մ'ինձ սեւ աչերեդ :

Արդեօք եա՞կ մ'ես թե երկնից գուարթուն.
 Կը նախանձին գեղոյդ վրայ վարդ, լուսնակ,
 Չայնիկդ ապշած լսելով ֆաղցր ու թրթռուն՝
 Նոնեաց խորերն կը սգայ լռին լուսինեակ :

Այլ ի՞նչ ֆաղցր է եթե ըլլամ ես գեփիւն,
 Եւ գգուելով մազերդ խարսեաւ ու անօւր,
 Տամ շունչս յուշիկ այտերուդ վրայ վարդասփիւն,
 Սրբեմ եթե կայ աչերուդ մեջ արօւր :

Պարսեզիդ մեջ իցի՛ւ թե վարդ մը ըլլամ ես,
 Եւ երբ դու գաս առաւօտուն ժրպսով պաղ
 Որ ֆու այտերդ կարմիր գունովրս ներկես,
 Թոռմիլ... փափկիկ ձեռքիդ մեջ տամ կեանքս վաղ :

Երանի՛ թե վրսակ մ'ըլլամ ես վրնիս,
 Եւ երբ յուշիկ նրսած մօտ իմ եզերքին՝
 Պասկերանայ հայելոյս մեջ ֆու ժրպիս,
 Պրդսորելով կապոյտ ալիքրս ցամփին :

Այլ ոչ, անգուրք եթե ունիս սիրահար,
 Իցի՛ւ թե անոր գերեզմանին վեմն ըլլամ,
 Եւ հոն թափած դառն արցունքներդ ծրծեմ յար,
 Ըզգամ դեմքդ... այլ ոչ, թեպէ՛ս վեմն, այլ կուլամ :

Ոհ, դու սիրե՛, գրգուէ ժրպե՛ հայ աղջիկ,
 Քեզի համար պիտի մեռնիմ, թո՛ղ պլպլուն
 Արցունք մ'հեղու դագաղիս վրայ սեւ աչիկդ,
 Տրխուր շիրմիս վերեւ երգե՛ թո՛ղ պլպուլն :

Հ Ա Յ Ո Ւ Հ Ի Ն

Աւնան մեջ եր, երեկոյ մը
Վերադարձիս յԻսկիւսար,
Օդը պարզ եր, հողմը մեղմիկ,
Ծովուն ջուրերն այ հանդարտիկ.

Շոգեմալին սարաւանդը
Նրսած անկիւն մ'առանձնակի՝
Ուշադրութեան ես այն օրուան
Լրագիրները կարդայի :

Մէկ մ'այ յանկարծ սանդուխէն
Վեր ելնելու ոտնաձայն մը
Շրփոթեց գիս եւ աչերս
Դարձուցի դեպ յայն կողմը :

Հայուհի մ'եր վեր ելնողն .
Բարձրահասակ եւ գեղադեմ .
Անցաւ մօտէս նա սիգանեմ
Նստաւ անկիւն մ'ինձ դեմ առ դեմ :

Ռհ, կարծես թէ նա երկնային
Զրւարթուն մ'եր վար իջած՝
Լոյս սփռելու, սէր բուրելու,
Խրոնվելու արտերն այրած :

Այլ չը գիտեմ թէ ինչո՞ւ
Կրկին աչերքս յառած՝
Իմ թերթիկիս վարայ միտս
Սիրսս եր ամբողջ խրոնված :

Միևչեւ մէկ մ'այ նաւաստին
Խոպով ձայնով մը գալով մօտ
Ըսաւ, հասա՞նք յԻսկիւսար,
Այ ի՞նչ նստե՞ր ես դու հող :

Վեր վերցուցի աչերքս,
Ոչ ոք տեսի մեջ նաւին .
Մի՞նակ էի՞նք երկուքնիս,
Մէկ մ'ես, մէկ մ'այ . . . նաւաստին :

Հետեւեալը Դուրեանին առաջին բանաստեղծութիւնն
է, զոր գրած է սասնեբեբ արեկան հասակին մէջ:

«Գարնանային կենացս մէջ
Սիրոյ ծաղկունք մ'ինչ փթթեին.
Սիրսս վառուած սիրովն անշեջ
Առաքինւոյն եւ գեղեցկին,

Մահագուշակ խորշակն անդէն
Հասաւ սիրեց արսիս բոլոր,
Թառամեցաւ ծաղկունք ամէն
Ծրլած փթթան արսիս մէջ նոր:

Այն որ սրլաւ երկրիս գարուն.
Ծաղկունք, մարգերն ալ գարդ նորին,
Եւ մարդկային վեհ արտերուն
Ուսոյց սիրելի գեղն ու բարին,

Ինչո՞ւ արդեօք խորշակահար,
Կ'ընէ ծաղկունք դեռափթիթ,
Ինչո՞ւ արդեօք նա սիրահար
Մտերն տեղու արտասուք մ'իտ:

Ահա՛ կ'իջնեմ ո՛հ, ես այժմէն
Առջեւս բացուած գերեզման խոր,
Բայց սա սքիւռու տեսարանէն
Ի՞նչ կայ արդեօք հանոյք մ'Անոր:»



Ա.

Երեկոյեան բայն կը սողար բարդիլ խաւ,
 Աստղագարդ անդունդն հիւսել լուռ ու սեւաւ,
 Տըխա՛ւր ըսուեր՝ գոր կը ձրգեր իր ետել
 Լուսափրփիք օրն սիրայնոց կարեասել :
 Կը նրումարուեր հազիւ երկնի կապուսակ
 Գմբէթին խոր փալփլող լ՛ալւոյն ջինջ յասակ
 Անդրադարձող գիշերուան աստղն անդրանիկ՝
 Զոր գրկեցին շուս վոսփորեան խոնջ ալիք :
 Մարք մտնող արփւոյն մարեր հուսկ շառայլ
 Սառնամանուս բլրոց վրայ քայլ առ քայլ .
 Ինչպէս հիւժեալ կոյսի մ՛ականարկ առ դամբան՝
 Ուր պարեն ցուրտ ծիծաղք սիրոյ դառնութեան,
 Ինչպէս եւ իմ դիւթեալ ականարկս առ արօ՛ս՝
 Զոր մըթագնեց մառախուղ մի նախանձոս .
 Ի՛այ շը կրցի ընդնշմարել եակն ան՝
 Զոր գգուէին նանանչ՝ գեփիւռ իրիկուան .
 Հողմածածան իր շրջագգետսն ու հոպոպք .
 Դեղձան վարսից գիրգ ուլան շուրջ ոսկի ծոպք,
 Կարծես ծաղիկ մ՛եր երագի հիաստանչ,
 Կը կոխկրօսեր այն ծաղկալից մարգաց լանջ .
 Թողե՛ք կոխել զի կը փրփրէ աւելք
 Երբոր հոժիկըն այսէն գոյն գեղանի
 Եւ իր անբիծ լանջէն առած քիչ մը հոտ՝
 Տանի սփռէ անապասներն աւազոտ՝
 Ի՛ահա փրթեն ծաղիկներ բիւր առաւել .
 Անոր համար ի՞նչ է ծաղիկը ծաղկել .
 Մի՞նչդեռ սիրոյ կես դիակներ կը յառնեն՝
 Երբ սել աչքէն սրլաք մ՛ուղղէ բոցեղէն :

Լուսինն արդէն կը ֆողարկեր՝ պըններ զինք
 Նուրբ ամպիկով՝ ուսկից ուսան քրտուհիք
 Ծածկել իրենց դեմքն հաջաղով նրբաթել .

Անոր նման թժգոյն ըլլալ եւ դիւթել :
Լուսի՛ն, գրտիր լոյս ցօղելու ցածուն հիւղ,
Ուր գէթ ցամբած է կանթեղին առկայծ իւղ.
Մի՛, մի՛ սքրվիր գաղջ արեւէն ձրմեռուան
Մոռնալ հիւղն՝ ուր ամայի է վառարանն,
Եւ լոկ սրտերն հոն կը մրխան յուսահա՛ս...
Ծագէ հիւղին այն՝ բանաստեղծն ուր աղբաս՝
Ինք լոյս՝ կրրակ ոչ մէկն ունի գրրելաւ.
Սարն իր աստեղց թո՛ղ դրդեակն ալ ջահերու,
Քրնա՛ ցօղել լոյս սրնակին այն ցածուկ՝
Ուր մայր մը գիրկն առած կայսառ մի մանուկ.
Յոյց սալ կուզէ քեզ Ասուծոյ գերթ պասկեր,
Դու որ միայն սիրահարաց ես լապսեր :

Տերեւներուն մէջէն արծաթ լի լուսինն
Կը դիտէի՝ ինչպէս որ դեմքն հարս կուսին՝
Երբ կը ծածկէ ֆողքն հիմնեցեան ոսկեթել,
Բայց սա վարդի փոխան գիտէ լոյս փթթել :
Այ աստղն աղօս եւ կարծես թէ աւելի
Երկրնի լուրջ խորը սուզած կը փալփալի,
Եւ վերջալոյսն ալ կը մարի որ դեռ հոն՝
Հրդեհի պէս բոցավառէր զհորիզոն :
Եւ դուք՝ կրա՛կք սիրոյ, մարիք շուտ եւ դուք,
Տեւէք՝ ինչպէս վերջալոյսն այս բոցաշուք... :
Արդեօք արեւն այսօր ո՛րտան սիրաբոյր
Կուսից լոյս դեմքն այրեց՝ ուսկից մեղմ համբոյր
Քաղել դողաս, կը վախնաս թէ կը թօշնի
Իր այտերուն վառ վառ վարդեր գեղանի :
Թաւուսք այսօր շուքերուն մէջ առանձին՝
Խորհրդաւոր ի՛նչ փրսփրսուք լրսեցին,
Ի՛նչ խոսուսներ ի՛նչ մտմունջներ սրմաշուք՝
Իսկ դուք, մացա՛նք հովանացա՛կք, ա՛հ, իսկ դուք... :
Ո՛վ հովանի՛ք, թաւո՛ւսք, խորե՛ր անմարդի՛
Ուր դայլալիկ թռչնոց՝ խորհիւն սաղարթի

Եւ երբ լրսուի արջագգետսի մը շրշիւն
Ձոր տրեւոց վրայ՝ սրփռէ մերկ աշուն,
Երբ շուփին սակ կոյս մ'առանձին ընէ ման,
Ես տրեւոց ետեւ դողամ անոց նման՝
Որ չըյայ թէ դիպիմ աչփին բոցեղէն,
(Պէ՛տք է դողայ միթէ տրեւն արեւէն)
Երբ ծիծառնուկն ինձ հետ հեծէ աղեկէզ,
Ո՛րչափ ասեմ քաղփին ժխորն, սիրեմ Ձեզ :

(Հիւանդութեանս պատճառաւ ընդհատուած)

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Ք Ե Ր Թ Ո Ղ

Աս հանգչի մարմին Պետրոսի Դուրեան,
Որ քանամեայ եջ ի գերեզման.
Երկաթագործի սա ծընաւ որդի,
Բանաստեղծ թռեալ ի կենաց ասի.
Ի սարսափաւ Յունկար քրտանի
Հազար ութ հարիւր եօթանասներկի.
Արեւըն իւր եր դեռ առաւօսին,
Օրհասին սեալ ամպ ըզնա ծածկեցին.
Մահ նորա բնաւից իւրոց սիրելեաց
Սուգ անմրիսիթար եւ կակիծ եաժ.
Վշտմբեր կենաց իւրոց սոսկ վրկայ
Կնեայ մահարձանս աւասիկ ասս կայ:(1)

ԾՆԵԱԼ Ի 1852

) Սոյն տապանագիրը գրած է կրտսերագոյն եղբայրն, Ամեն. եղիտ
աօրիարկ Դուրեան 1872 թուականին:

Յ Ա Ն Կ

	52
Ա	58
ԱՀԱ ՍՐԱՆԱՅ ՕՐՆ ԵՐՋԱՆԻԿ	49
ԱՄԵՆ. ՀԱՅՐԻԿԻՆ	5
ԱՄԵՆ. » (Ի ԴԻՄԱԻՈՐՈՒԹԵԱՆ)	8
ԱՌ ՄԱՅԻՍ	25
ԱՌ ԿՈՅՍՆ	32
ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԿԵՆՍՅՄ ՄԷՋ	57
ԴՐԺԵԼ	36
ՋՂՋՈՒՄ	55
ՋՆԷ ՊԱՇՏԵՄ	37
ԹՐԹՈՒՀԻՆ	21
ԻՂՋ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ	3
ԻՑԻԻ ԹԷ	13
ԻՄ ՑԱԻԸ	18
ԻՄ ՀԱՆԳԻՍՏ	40
ԻՄ ՄԱՀԸ	47
ԻՆՋ Կ'ԸՍԵՆ	48
ԼՃԱԿ	24
ԿԸ ՍԻՐԵՄ ՋՔԵՋ	55
ԿՈԿՈՆ — ԾԱՂԻԿ	41
ԿՈՅՄՆ ԼՔԵԱԸ	33
ՀԱՅՐԻԿՆ ՀԱՅՈՑ	19
ՀԱՅՈՒՀԻՆ	56
ՀԾԾԻԻՆՔ	44
ՀԵԾԵԾՄՈՒՆՔ	42
ՉՕՆԻԿՔ	34
ՄԱՆԻՇԱԿ	17
ՄԱՆՈՒԿՆ ԱՌ ԽԱՉ	14
ՄԱՐՏԻՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ	10

ՄՆԱՍ ԲԱՐԵԱՒ	58
ՅՈՒՇՔ	45
ՆԱՅՈՒԱԾՔ ՄԸ	35
ՆԷ	31
ՆԵՐԱ ՀԵՏ	30
ՆՈՐ ՍԵՒ ՕՐԵՐ	11
ՊԷՏՔ Է ՄԵՌՆԻԼ	26
ՍԵՒ ՍԵՒ	30
ՍԻՐԵՑԷՔ ԶՄԻՄԵԱՆՍ	29
ՍԻՐԵԼ	25
ՍԻՐԵՑԻ ՔԵԶ	15
ՎԻՇՏՔ ՀԱՅՈՒՆ	27
ՏՐՏՈՒՆԶՔ	50
ՏԱՊԱՆԱԳԻՐ	61



ԿԸ ԾԱԽՈՒԻՆ ՀԵՏԵԻՆՈՒ, ԳՐԹԵՐԸ

Հանակիր (Բ. Թիւ) (Գրուկ. Հաւաքածոյ)	160 դր.
Լեւնախայասանի Հերոսամարտ	30 »
Իսխանուհի Մալեկ (Թասերգ.) Մ. Մեթիբլիքնի	30 »
Սրբմունի Քաղաքապետ » » »	» »
Թիապարտ (Առաքելապ)	
Կոմսուհի Տր Սեկի տի	10 դր.
Իռւմէն ժողովրդական Պատմութիւն	
Ն. Բոլա Երկու	5 »
Վերադարձ (Թասերգ.) Ժորժ Բիլլիէ ԼԷ	
Ապահովագրեայ Նամակ մը (Կասակերգ.)	
Ժ. Բուրբէլի (Մեկ հասուով)	2 Ֆրանկ
Սիւրիանայ Երգարան (Լ. Գիրք)	15 դր.
Սուրիանայ Երգարան (Բ. Գիրք)	5 դր.

Մեծախառնակ գնողներուն բացառիկ զեղջ.

Հասցէ

Imprimerie «Hraztan»

B. P. N° 587

ՄԱՍԼԵՅ ՏԵԿ Ի

ԳՐԱՆԻ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԳԻՆ 10 Ս. Դ.

ԱՄԼ Հիմնարար Հիտ. Հրատ.



220031567

A $\frac{11}{31567}$